

ԷՈՒՊԵԱՆ ԵՒ ՄԷՄԼՈՒՔԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ

Ճաթիխանսց նուսպումէն վերջ, զգալապէս կը շրջի Եգիպտոսի Հայութեան բախար: Ալ չեն յիշուիր Պետական ծառայութեան մէջ գործող Հայ մեծամեծներ. չեն յիշուիր նոյնպէս Վերին Եգիպտոսի մէջ կամ Գահիրէէն դուրս Հայ Եկեղեցիներ և Վանքեր, որոնք, այդ մարզերուն մէջ Հայ մնացած չ'ըլլալուն պատճառաւ, կամ կ'անցնին իրենց նախկին տէրերուն ձեռքը և կամ կ'ընտազբաւուին ուրիշներէ:

Նշաններ կան նոյնիսկ, թէ Հայերը Գահիրէի մէջ ունեցած իրենց Եկեղեցիներն անգամ կորսնցնելու վիճակին ենթարկուած են պահ մը: — Այսպէս, ըստ Աբուսահլի, 1183 — 86 տարեմիջոցին, Հայոց Թագաւորին (որ Պարոնանց Պարոն Ռուբէն Իշխանապետը պիտի եղած ըլլայ) և Կաթողիկոսին (Գրիգոր Տղայ) յանձնարարութեամբ Եգիպտոս կուգան հայ Եպիսկոպոս մը և երեք քահանաներ, Մեղիք Սալահէտախէն և Մեղիք Սայֆէտախն Ապուպէքրէն մէկ մէկ նամակներով առ Մեղիք Թաքիատտին, որպէսզի Այդեստանի և Զահրիի մէջ եղած Եկեղեցիները վերադարձուին իրենց: Եպիսկոպոսը կ'իջնէ Հարա Զուէլայի Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցին, և ընսի հոն կ'ընակի, և հոն կ'մեռնի նաեւ յետ ժամանակաց:

Ըստ նոյն պատմիչին, դարձեալ, նոյն միջոցներուն, Հայ մը կուգայ Կիլիկիայէն և Եկեղեցիի մը մէջ, որ նախապէս Հայոց կ'պատկանէր, Վահրամ (Թակէղուլլահ) Պահլաւունի Իշխանին պատկանած զանձը կ'վնտուէ, ու երբ չ'գտներ, կը մտածէ թէ Եկեղեցին յախշտակողները կողոպտած են զանոնք: